Յեր ևն անհրաժեշտ որաւիսխ խողովակներ. — Ուտփոխ խողովակներն անհրաժեշտ են, յերբ կարիք է լինում ճակնդեղի արմատները պահեստ տանել նախօքան կայուն ջրակերն ընկնելը: Յեթն տաք յերկարատե աշուն է լինում,

այդ դեպքում, առանց սղափոխ խողովակների, խրամա-  
ներում և բուրդերում շերմատափնանն ուժեղ բարձրանում  
են, արմատներն սկսում են ծլել և հիվանդանալ:

Ողափոխ խողովակներ պետք չեն, լերը նախնդեղը  
պահպում և խրամատներում՝ հողով ծածկված շերտերով  
(մի շերտ նախնդեղ, մի շերտ հող) և այն դեպքում, լերը  
նախնդեղը խրամատ ևն լցնում չար և ցուրտ լեզանակին:

Ողափոխ խողովակները շինում են այսպես. խրամա-  
տի կամ բուրդի մեջտեղում 15—20 սանտիմետր խորու-  
թյամբ առլակ են փորում, փորը ծածկում են շաա անցքեր  
ունեցող առխաակոյի նրա վրա լուրարանչյուր 3—4 մե-  
տրը հեռավորութլուն վրա, ուղղանալաց ձևով դրվում են  
նախնդլոխ անցքեր ունեցող խողովակներ, փորնց վերևի  
 $\frac{1}{2}$  մետր տարածութլունն անցքեր չպիտի ունենա: Բուր-  
դերում սղափոխ առլակի ձայրերը հանում են փոսից դուրս




Նկ. 3. Խրամար ծածկելու մեթ.

Արմատներն ինչպես պեխ և լցնել պահեստներ. — Խր-  
ամատները լցնում են յերկու ձևով. խրաք վրա լցնելով  
և շերտերով դասավորելով, լուրարանչյուր շերտը ծածկե-  
լով հողով: Շերտերով դասավորելը պահանջում է մեծ  
աշխատանք, դրա համար էլ այդ միջոցը կիրառվում է մի-  
այն սերմացուների վերաբերմամբ, փորնց պահպանման  
ժամանակ առանձնապես փտանդավոր են արմատների հի-  
վանդութլունները: Բրբե բանջարեղեն գործածվող ճակն-  
դեղը սղափարար պահում են խրաք վրա լցրած:

Ճակնդեղը պահեստ տեղափոխում են կլիցցներով կամ պարկերով:

Թրամատը պետք է լցնել զդուշուխյութ, թույլ չտալով ճակնդեղի արմատները թափել ամբողջ սալով միանդամից, կլիցցներից և պարկերից արմատները շի կարելի թափել բարձրից ու նրանց վրա ման գալ:

Թրամատը լրիվ չափով անհրժեշտ է լցնել միանգամից, գեանի մակերևույթից 15—20 սանտիմետր պակաս լցնելու այդպիսի ձևն առանձնապես կիրառել այն դեպքում, իբր պահվում է սերմացու ճակնդեղ: Լցված թրամատը վերից ծածկում են 20—25 սանտիմետր հողաշերտով: Այդ դրուխյութը նա մնում է մինչև ցրտը սկսվելը:



Ն4 Թ. Թուրդը ծածկելու ձևը:

Ճակնդեղը բուրդներում պահելու դեպքում նկատի առնենալ հետևյալ լրացուցիչ կանոնները: 1) բուրդը լցնել մի ծալից, 2) պահպանել կողքի պատերի ուղղութիւնը և թույլ չտալ նրանցում դար ու փոսեր կողքի պատերի թեքութիւնները պետք է կայուն լինեն. գրանդ պետք է դասավորել ձեռքով, 3) բուրդն ախպես դասավորել, վոր նա ունենա կանոնավոր կտրի ձև (բրգածն), ինչպես ալդ ցուլը և տված № 6 նկարում:

Թուրդը լցնել-դասավորելուց անմիջապես հետո պետք է ծածկել 10—15 սանտիմետր հողաշերտով: Այդ դրու-

թյամբ նա մնում և մինչև ավելի ցուրտ յեղանակներ սկսվելը:

Ինչպես ծածկել բուրգեր յւր խրամասները.— Խըրամասաներն ու բուրգերը վերջնականապես պետք և ծածկել կոյուն սառնամանիքներն սկսվելուց առաջ, Վտանգավոր և նույնիսկ արմատների լիկլիկ սառչելը և դա անխուսադարելի չէ:

Ձմեռն համար վերջնականապես ծածկելու համար իբրև նյութ կարող են ծառայել հողը, ծղորդը, ծառի տերևները: Բանջարանոցային անտեսության դիտա-հետազոտական ինստիտուտը ծածկելու հետևյալ միջոցներն և հանձնարարում գործադրել:

1) հարավային շրջաններում 75—100 սանտիմետր հասնող թյամբ հողով ծածկել, կարիք յեղած դեպքում ավելացնելով 20—25 սանտիմետր գոմաղբի շերտ:

2) միջին գոտու շրջաններում՝ սեանդերում և շոքոցրած ճահիճներում, 40 սանտիմետր կաշուն ձյունաչերտ լինելու դեպքում, ծածկը պետք և լինի 75 սանտիմետրից փոչ պակաս, վրան ավելացնելով կարասֆլի և տամախի փրերից և չրփուից՝ ձյուն պահող շերտ:

3) միջին և հյուսիսային դաշտերի շրջաններում՝ ավազային և կավավազային հողերում՝ սկզբում ծածկում են 18—25 սանտ. հողով, նրա վրա թույլ կերպով փռում 20—25 սանտ. ձգաս կամ ծառի տերև, հետո նորից 25—35 սանտ. հողի շերտ և կարասֆլի փրերից կամ չրփուից՝ ձյուն պահող շերտ՝ 15—20 սանտ. հաստությամբ նույն անգամ գործադրվում և և մյուս միջոցը, վերի մասնակ ծածկում են 50—60 սանտ. հողով, հողի վրա լցնում 25—30 սանտ. ծառի տերև կամ տորֆ կամ 15 սանտ. լավ ալրված գոմաղբ\*):

\*) Բուրգերի կամ խրամասների ծածկերի հաստությամբ վորջում են լամանոյն ավելի տեղի վարելագրաբ տառչյուս խորությամբ:

Յրամատները և բուրգերը ծածկելու ժամանակ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ կանոնները.

1) խրամատները և բուրգերը ծածկել սկսել կողքերից 100 սանտ. վրչ պակաս հետախորտությունից, Յեթն ծածկում Էն ծղատով կամ ծառի տերևով՝ այդ դեպքում ծածկել սկսում են խրամատի կամ բուրգի յիզրերից 60 սանտ. հետախորտությունից, այդպիսով տաքացնելով և բուրգի շրջապատի միշերտը.

2) ծածկելու համար հողը վերցնել խրամատների կամ բուրգերի միջի հողամասից, բուրգի կամ խրամատի զատերից 115—120 սանտ. վրչ զակաս հետախորտությունից.

3) ծածկելու համար հող վերցնելու ժամանակ այնպես անել, վոր ծածկի մոտ խոր փոսեր չառաջանան. հայը վերցնել թեք փորելով այնպես, վոր այդ թեքությունը լինի ծածկի հակառակ ուղղութիւամբ.

4) բուրգերը ծածկելու համար վերցնել փութը, շատած հող, առանց սառած կոշտերի.

5) ծածկն ամեն կողմից անել հավասար հաստութիւամբ բուրգի ներքևի մասերում հաստութիւանն այլեւայնել 15—20 սանտ.

6) խրամատի ծածկի մակերեսը պետք և ունենա կլոր ձև (նկ. 5) իսկ բուրգերի մակերեսը՝ կանոնաւոր կարի ձև (բրգաձև, նկ. 6).

7) ծածկելուց հետո մաքրել ջրատար տուփակները Ինչպես ցանել հսկողությունը խրամատների յեվ բուրգերի վրա.— Յրամատներին և բուրգերին հսկելու համար պետք է հատուկ մարդ ունենալ, վորը պետք է հետևի նրանց ջերմութիւանը Զերմութիւանը չափելու համամ կիրառում են հատուկ ջերմաչափերը Զերմաստիճանի գրանցումները պետք է կատարել ամեն օրը Մինչե ցրտերն լնկնելը ջերմաստիճանը կարգավորելու համար պետք է սգավել օդափոխ խողովակներով, զիշերները նըրանք բաց անելով և ցերեկները փակելով:

Ստանալանիքների ժամանակ ուղղանայաց ողափոխ խաղովակներն ամուր ծածկում են ծղոտով իսկ բուրգի ներքևի կողքերի անցքերն ամուր ծածկում են ծղոտով և հողով:

Յեթև օղափոխ խաղովակներով չի հաջողում իջեցնել շերմութիւնը և նա համարւմ է Յ—10 աստիճանի, այդ դեպքում անհրաժեշտ և մտտակա լավ որերից մեկում բուրգը կամ խրամտար բաց անել և սառաքել արմատները գրաւթիւնը: Յեթև բաց անելիս կհարտարեւրվի, վր արմատները միայն ձլել են, բայց հիշմանքովիւն չկա, անհրաժեշտ և միջոցներ ձեռք առնել խրամատի կամ բուրգի շերմաստիճանն իջեցնել: Դրա համար սեղանի ծածկը բաց են անում և կողքերից շինում են ողանցքներ: Յեթև տը ևլ չի սղնում, պետք և արմատները սեղափոխել նոր խրամատ կամ բուրգ: Վերջինս նախափոր և կատարել միայն աշնանը:

Յեթև նկատվում է, վոր արմատներն սկսում են վրտել, շտապով պետք և շահել, և թողնել միայն առողջները: Թրամատներում և բուրգերում ճակնդեղը ձմեռը պահելու համար նարմու շերմութիւն համարվում է 2-ից 4 աստիճանը: Ջերմաստիճանը 2-ից ցած իջնելու դեպքում ճակնդեղը կարող է սառչել: Այդ դեպքում անհրաժեշտ և շտապ կերպով առցայնել և լրացուցիչ 20—25 սանտ. հաստութիւնը դրամադրով ծածկել: Պահվող արմատները հալոցքի ջրերով թրջվելուց պահպանելու համար (թրջված արմատները խրամատներում շուտով փչանում են) վաղ դարնանք, հենց վոր ձլունն սկսում և հալվել, անհրաժեշտ և մաքրել ջրատար աւակները և չթողնել, վոր ջուրը հալաքիված մնա:

Տար լեղանակ սկսվելիս անհրաժեշտ և ողափոխ խաղովակները գիշերը բաց անել և ցերեկը ծածկել, նախապես և վերջնել գամաղբի ծածկոցը և ձյուն պահող շերտը: Յերը ձյունը կհալի, պետք և թեթևացնել ծածկի վերի մասը և ցածի հա-



դածածկի մեծ մասը Այդ ժամանակ ողջացվեալ եւ մի քանի տեղ բուրդերի վրայից վերցնել հողը մինչև ծղորտի ծածկի շերտը

Հենց վոր սկսվում ե կայուն, տաք, գարնանային լեզանակ, խրամամները ե բուրդերը ըաց են անում, արմամները հանում են ե տեսակավորում։ Առողջ արմամները, լեթե նրանք նշանակված են սերմի կամ անմիջապես գործածելու համար, դարձվում են ժամանակավոր վերերկրյա բուրդում ե անպայման նույն սրը ծածկվում ծղորտով կամ հողագե Նույնիսկ միջանի ժամով ըաց կողմ արմամները խիստ վնասում են։ Սերմնադաշտում տնկելիս այդպիսի արմամները գծվոր են կոչում ե նրանց մեծ մասը չի սերմնակալում։ Յեթե անհրաժեշտ ե լինում դարնանը յերկար ժամանակ արմամները պահել, նրանք պետք ե տեսակախել ըանջարապահեստ կամ մատուց տերեւները մաքրելուց հետո նորից դասավորել խրամատում։ Շակնդեղի տողջ արմամները խրամամներում ատանց վնասվելու կարող են պահվել 1—1½ ամիս

Գործածելու համար պահվող արմամները պետք ե դասավորել շարքերով՝ շարքերն իրարից ըածանելով հողագե խրամատը հակնդեղով լցնում են նրա շարձութունից 20—25 սանտ. պակաս, վերպիսի տարածությունը ծածկում են հողով։

## ՍԵՂԱՆԻ ՎՃՈՆԴՆԻ ՏԵՐԱՎԵՄ ՍԱՐՅԵՐԸ

Լավ սորաներով ցանելը յուրաքանչյուր դուրսամտեսական բույսի բերքատվության ե վորակի բարձրացման հիմնական պայմաններից մեկն ե Այդպիսի ցանը հաճախ տալիս ե բերքի բարձրացում մինչև 50 %՝ անորակ, վոչ տեսակավոր սերմերի հանդեպ։ Բայ այդ նշանակում ե, վոր կատարելով նույն աշխատանքները՝ հողը մշակելու, ցանքի խնամքի վերաբերյալ, կիրառելով նույն պարարտանյութերը, ըաց վոխտրինելով անորակ սերմերը անտակավոր սերմերով,

մենք ափերացեալ մենք բերքատուութիւնը կիրով շափ, խոզ  
յերբեմն և ափերի Եւրոպայանց շատ հողանուտեան և խորհ-  
անուտեանութիւնն բանօր պետք և դառնաւ. սերմի վերակի  
համար պարբարոյ:

Սեզանի նախնական շատ սորակը կան Մեր բանջա-  
բարտաւութիւնն մեզ ամենից շատ տարածում են՝ ապիա-  
կափուն, ապիտակափուն-կլար և կլար աւտակները, և միայն  
հարափում ջիշ բանակութիւնը ցանկում են յերկարակի՝  
կանանն արժաններով սորակը:

Հաս մասնութի դուրսի, սեզանի նախնական սորակը  
լինում են՝ մուգ կորմիլը, մանուշակագույն, կարմիր և  
գեղնա-կարմիր դուրսի:

Սորսի լավ բարութիւնն կատարելու համար պետք է  
խմանայ նրա առանձնահատկութիւնները: Ծանաշելով սոր-  
ակը, կարելի չէ առանց սխալութեան վարչել նրա բերքա-  
տուութիւնը, հասունանալու ժամանակը, վերակը և նշա  
պիտանիութիւնը: Եւրոպայ անտառութիւնն համար Սորակ  
հանաչելը հատկապես անհրաժեշտ է սերմարտաւան աշ-  
խատանքների ժամանակ: Սորակ մենք տալիս ենք նախն-  
ական ափերի տարածում սորակի նկարագրութիւնը:

1) «Բարդ» — Ստացված է նախկին Գրիբովսկի սե-  
լեկիտն կաշանում 1926-28 թվերին: Միջին վաղահասու-  
թիւնն սորակից է: Եւրոպայ մինչև կանաչ վիճակում սո-  
ստորոնները տեսւմ է 55—60 սր, մինչև արմատի լրիվ  
հասունացումը՝ 120 սր: Արմատի բերքը մի հեկտարից,  
նախան խնամքին, հասնում է 15—35 տոննի: Այս սորակը  
լավ է աճում ամենուրեք: Առանձնապես լայն սարած-  
ված է Միութիւնն կենտրոնական մարզերում:

«Բարդ» նախնական արժանները կլար են, համարյա  
զնգանն, մուգ մանուշակագույն կեղևով: Մասնութիւնը հյու-  
թալի լի, նուր, առանց դառն համի: Եւրոպայ արժանների  
(70—80%) միայն առանց սպիտակ սղակների, մուգ-

բորդո գույն ունի Տերևակոթները խիտ ներկված են, տերևները կանաչ են, և միայն աշնանը բույսերից մի մասի վրա լերկոււմ են շաց-կարմրագուն տերևներ:

«Բորդո» սորայը ձմեռը պահելու համար լավ դիմացկուն է:

Մերձաբուձության համար ընտրում են հարթ, կլոր ձևի, փոքր գլխով և բարակ սաամեղքածև սուշով արմատները:



Նի. 7. «Բորդո» եակնուկ

2) «Սկիլպա».—Միջին վաղահասության սորա է և Ֆանքից մինչև բանջարեղեն սաամալը տևում է 55—60 սր, մինչև արմատի լրիվ հասունացումը՝ 130—135 սր: Կլոր ձևի արմատ ունեցող սորտերի մեջ ամենաշատ բերքատուն է Բեքրատվությունը մի հեկտարից՝ լավ խնամքի դեպքում՝ համնում է 38—40 տոննի:

Արմատները կլոր են, արմատի բարձրությունը (դր-

խից մինչև պոչը) միջին ավելի չե, քան հաստութիւնը: Պլուխը սեռ չի, պոչը շատ բարակ և: Մասնութիւնը հլու-  
 թալի, նուրբ և Աշտիակ բուժը շատ ուժեղ և: Տնքնները  
 կանաչ և: Տերեւակները բաց դուխի չեն: Չմեռը պա-  
 հելիս լավ գիճանում և:

Աերուցտի համար վերցնում են 1 լար, հարթ արմա-  
 ները, իսկ լայն, սպիտակ սղակներով արմատները խտա-  
 նում են:



Կ. 8. Վեցերգոս հակոբյ

3) Վկուարիւ.— Միջին գազաճաստութիւն ունեցող  
 սորս և: Մանրից մինչև քանդարեղեն սառնալը տեղում և  
 50—60 որ, մինչև արմատի լրիվ հասունացումը՝ 120 որ:  
 Բերքը մի հեկտարից համար և 12—25 սաննի:

Արմատները կլոր-տափակալուն ձևի չեն, վերեից՝ կլ-

արբիւածի նման, իսկ Ներքեւէ ջիշ կոնաձեռ Գլուխը մեծ  
 է, պոչը՝ հաստ, վորով և նա կապիտ տեսք ունի։ Ազակա-  
 վորու մե ուժեղ և Մանուշուքն աղելի կապիտ և, քան վերը  
 նկարագրվածներինը Մանուշուքը կարմիր մանուշակագույն  
 է, կեղևը մուգ-մանուշակագույն։ Սերմացուի համար վերջ-  
 նում են կլոր ձևի, ասփակավաճ, վարք դլխով և կարմիր  
 մանուշակագույն արմատները։



Ն Կ. Ե. ԵՅԵԳԻՍՏԱԿԱՆ ԷՍԿԻՆԵԿ

Ճ) ԵՅԵԳԻՍՏԱԿԱՆ ԷՍԿԻՆԵԿ.— Հին, ֆրանսիական  
 ծագում ունեցող սորտ է, արք շատ տարածված է մեր  
 արտադրութեան մեջ։ Ծուռ կամոող և Մանրից մինչև բան-  
 ջարեղեն ստանալը տևում է 50— 60 օր, մինչև լրիվ հա-  
 սանացւթը՝ 115 օր։ Բերքը մի եկտարից հասնում է  
 մինչև 30 տոննի։

Յրմատադուռը տափակ է։ Արմատի մակերևութն  
 անեղողութեան սկզբում հարթ է, համնելու ժամանակ ան-  
 կլանափոր և դառնում։ Արմատի կեղևը մուգ-մանուշա-  
 կագույն և Մանուշուքը հլուփայլի, նարք, հասեղ և, բայց

յերբեմն՝ գտանուհուս Մասնալուսիք մանուշակաղուշն կամ մանուշակա-կարմրաղուշն ևս Ողակալորումն (սլիտակ շերտերի դուրսիցս նր լայնաթլամբ կարված արմատի վրա) ուժեղ և Տերևները մանր են, մինչև ամառվա կեսը կարմիր գուշն են ստանում, աշնանը վառ կարմրաղուշն են գտնուհուս:

Գանելու համար դիմացկուն են Սերմացուի համար բնարում են ամառի, հարթ, փոքր դլխով, բարակ պոչով և մանուշակաղուշն կամ մանուշակա-կարմրաղուշն արմատները:

5) «ԿՐՈՒՄԱԿԱԿԱՆ» ճակնդեղ. — Գերմանական ծագում անեցող սորս և, շատ տարածված և հարավում, ուշահաս և Յանելուց մինչև արմատի լրիվ հասունացումը տևում և 140—145 սր թերթը մի հեկտարից հասնում և 20—25 աննիւ Այս սորսը լավ և անում խոր, փուխը հողերում: Մաղր ու ծանր հողերում արմատների բերքն ուժեղ էր պով բնկնում ևս Արմատները լերկարակ են, կոնավե, մուգ-մանուշակաղուշն, համարյա սև կեղևով: Տերևները մեծ են, մուգ-մանուշակաղուշն՝ մետաղի վալլով: Մասնալուսիք կոշտ և, համոյ ներկված սև կարմրաղուշն: Ողակալորումը համարյա թիւ բացակայում և Սերմացուի համար չնարում են կանանավար կոնավե, սև-կարմրաղուշն արմատները:

## ԹՆՉՊԵՍ ԱՃԷՅՆԵԼ ՎԿԻՆՊԵՂԸ ՍԵՐՄԻ ԿՍՄԵՐ

Մեր արդեն դիտենք, վոր ճակնդեղը խաշածն փոշոտվող բույս է: Ա. դ. նշանակում և, վոր ճակնդեղի ծագկող սերմացուն, վորպեսդի սերմ տա, պետք և փոշոտվի ալլ սերմացուի փոշով (ծագկեփոշով): Առանց փոշոտվելու սաար փ. իով ճակնդեղի գերմնակալը սերմ չի տալիս: Փոշին (ծագկեփոշին) շատ մանր և և թլթլե, նա ջամուս միջլեցով բշվում տարվում և սերմաղաշանբով և նրա սան-

մաններէից հեռու Միտնդամայն ստուգված եւ վոր բաց դաշտից քամին կարող եւ փոշին քչիւ-տանել հողատափից մինչև Յ կիլոմետր հեռավորութեան: Ի՞նչ կատարվի, յեթե այդ տարածութեան սահմաններում կան ճակնդեղի զանազան սորտերի սերմնադաշտեր, որինսպ՝ սեղանի եւ շարքի, կամ՝ սեղանի եւ կերի Պասա-խանը պարզ եւ նրանք միմյանց կփոշոտեն, կտան խառնուրդներ, եւ սորտերը կայլասերվեն:

Իրանից խաւափելու համար պէտք եւ ակնարկումնում անցնել նախկեղի միայն մի սորտի սերմացու: Այդ կանոնը դիտարկող պայմանն եւ մաքուր սերմեր ստանալու համար եւ այն պետք եւ ճշտութեամբ կատարել:

Սերմի համար ճակնդեղն առաջին տարին, հիմնականում, ցանում եւ խնամում են նույն ձևով, ինչպես երանջարեղենի համար: Թնամբի բնթացքում առանձնապես ուշադրութեամբ պետք եւ կատարել նսորացումը՝ բույսերը միանգամից պետք եւ դատարկել միմյանցից պահանջվող տարածութեան վրա: Անթուլլատրելի լե մի քանի բույս իրար մաս թողնել կամ նեղ տարածութեաններ թողնել: Ա դալխի բույսերից ստացված արմատները կլինեն այլանդակ եւ սերմացուի համար անպետք:

Բերքահավաքի ժամանակ պետք եւ աշխատել, վոր դադարի ու կողքի բողբոջները չվնասվեն: Տերկները կրտրելու ժամանակ տերեւակոթերը պետք եւ թողնել մի սահմաններից վաղ պակաս: Ինչպես կատարել բերքահավաքը, մենք արդեն բացատրել ենք: Ա ներակարհորն ալտակ այն եւ, վոր թուլլ շտրվի դաշտում արմատները թառամեն: Թառամած-թուլլացած արմատները ձկնոր լավ չեն դիտանում եւ շուտ փշանում են:

Ինչու անհրաժեշտ եւ բերութեւնը յեղ ինչպէս այն կտարել: Վորքան եւ սորտը լավ լինի, այնուամենայնիվ, նրա մեջ եւ պատահում են այնպիսի բույսեր, վորոնք

իրենց հասկություններով սորաի շատ բուշտերից շեղվում են դեպի վատըր Այսպէս, որինակ՝ կարող են պատահել սպանակալիւմ բուշտեր, բայց գունով կամ ուրիշ վորեն պակասություն ունեցողներ: Յեթե նրանք չհետաքցին և անկվին սերմի համար, այդ գեպում նրանք փոխադարձաբար փոշտովելով՝ իրենց պակասությունները կփոխանցեն արիւրի բուշտերին: Գրանից ուժեղ կերպով կընկնի ամբողջ սորաի արժեքը: Սորաբ չփշաքնելու համար իրք սերմացու պետք է ընտրել այնպիսի արմատներ, վորոնք իրենց ձևով, մասնութի գոյնով և այլ արտաքին նշաններով համապատասխանում են ավայ սորաի պահանջներին (դրանք կլինեն, այսպէս կոչված՝ արիւրի արմատները), իսկ բարբ հիվանդ և սորաից շեղվող բուշտերը պետք է լստաներ:


Փաստելով հմտաաւում և, վոր հենց վոր ընտրություն չի կատարվում, սորաի արժեքավոր հասկությունները խիստ ընկնում են: Սորք պահպանելու, ամբացնելու յեյ լավացնելու համար բնագությունն անհրաժեշտ է:

Սերմացուի համար ճակնդեղի արմատների ընտրությունը կատարվում է յերկու անգամ—աշնանը՝ պահեստ գնելու ժամանակ և դարնանը՝ անկելուց առաջ: Աշնանը հողից հանելիս արմատներն անմիջապէս տեսակաւորվում են և սերմացուի համար վերցվում են սորաի համար միայն արիւրի արմատները: Թե յորաքանչաւր սորաի համար վոր արմատները պետք է հաշվել արիւրի, նրկարարված և վերնում՝ սորաերը նկարադրելիս: Այդ նկարադրությամբ և ճակնդեղի ձևի նկարներով (նկ. 10) պետք է գեկնովարվել՝ աշնանն ընտրություն կատարելիս:

Գրանանը, անկելուց 10—12 սր առաջ, ստուգում են արմատները և նրանց գոյնը: Սերմի համար ընտրում են ամենաուժեղ ներկված մասնութով արմատները: Այսպէս, որինակ՝ «բորգո» սորաից վերցնում են ընտրովին սպի-



տակ ողակներ չունեցող արմատները, իսկ «չեղիպտական», «կրասբի» և «եկլլալս» սորոներում թույլատրելի լին նեղ սպիտակ ողակներով արմատները: Արմատի մասնյուլի դուլնի ստուգոււմ կարելի չե կատարել: զայլիկոնով (ծաղող դորմիթ): Արմատի ավելի հաստ (լասն) մասից զայլիկոնով հանվում և մասնյուլի նեղ սլունիկ (սմոմ) մի ասնտիմեար հաստությամբ, և նրանով վորոշվում և գունավորման խտությունը: Կամ արմատից սովորական դո-



Նկ. 10. Սեղանի ճակնգիտ արմատների ձևերը

«Չեղիպտական» սեղանի համար ընտրում են 1, 2, 3, 4, 5 ձևերը: «կրասբի» համար—7 ձևը: «բորգոյի» և «եկլլալսի» համար—8, 9, 10, 11 ձևերը: «չեղիպտական» համար—15 և 16 ձևերը:

Նակով յերկարությամբ կտրվում և մասնյուլի փոքրիկ մաս և գունավորումը վորոշվում և նույն ձևով, ինչպես «սմոմով» ստուգելու ժամանակ: Կարելի չե նույնպես արմատը յերկարությամբ յերկու հավասար մասի բաժանել: Վերջին ձևը (չերկու մասի բաժանելը) արմատի գունավորման խտությունն ստուգելու համար ամենահարմար ձևն է:

Արմատները կիսելը հաճախ և կիրառվում ճակնգեղը սերմացուի համար մշակելիս: Ինչպես ցույց և տալիս փորձը, այդ միջոցը, բացի ճակնգեղի արմատների գուլնի

միասնասակությանը բարձրացնելուց լավ և և նրանով, վոր տալիս և անկանյութի մեծ խնայողություն: Սերմի բերքը կիսած արմատներէից համարլա նուրնն և, ինչ վոր ամբողջ արմատներէից և ստացվում:

Բայց կիսած արմատները տնկելու ժամանակ կարող են լինել և անհաջող զեպքեր: Ամենից շատ անհաջող զեպքեր լինում են տնկալիս տեղերում, վորտեղ գարնան սկզբում անձրևներ քիչ են լինում, անկված կիսած արմատներն համար խոնավութունն անբավարար և լինում, վորն հետևանքով նրանք խիստ թառամում են, և յերկար ժամանակ նրանց անկցողությունը կանդ և առնում: Իսկ անկամն ուշացնելու զեպքում շատ արմատները ցուրտ ընկն շեն տալիս, իսկ յեթե տալիս են, նրանք լքել շեն դարգանում և սերմեր շեն տալիս: Դրա համար էլ ալն տեղերում, վորտեղ չորալին դարուն և լինում, չի կարելի թույլ տալ սերմացու արմատները կիսել: Իսկ այն տեղերում, վորտեղ գարնան սկզբում անձրևներն առատ են, վտան կարող և կիրառվել արմատները կիսելու միջոցը:

Արմատները պետք և կարել զազաթի բոցըջի մեջ-ակելից հալատար մասերի: Մանր արմատները չի կարելի կիսել կիսում են 325—250 գրամ ծանրութուն ունեցող տափակավուն և կլոր սւրտերը և 325—350 գրամ ծանրությամբ լերկարուկ սւրտերի արմատները:

Կեսերով պետք և տնկել վորքան հնարավոր և շուտ հատուկ ուշադրության գարձնելով տնկողների աշխատանքի վորակի վրա: Կանոնավոր տնկելը կանխորոշում և դործի հաջողությունը: Նախապատրաստված զիսած արմատները պետք և պահպանել թառամելուց:

Սեմուղացի պահանջները հողի յեվ պարտադրանքների վերաբերյալ. — Սերմացու ճակնդեղը հողից պահանջում է ուժեղ սնունդ: Սերմի ամենաբարձր բերք

ատացվում է, յերբ սերժնադաշար պարարտացվում է գո-  
ժադրով հեկտարին տալով 40—50 տոնն (աղբառ հողե-  
րում)։ Մեհանդերում գոժադը կարող է փոխարինվել ար-  
հեստական հանքալին պարարտանյութերով։

Հեկտարին տալիս են 4 ցենտներ սուպերֆոսֆատ,  
3 ցենտներ ծծմբաթթվալին ամոնի և 3 ցենտներ կալիումի  
աղ։ Այդ պարարտանյութերի խառնուրդը վոչ թե սրվում  
են հողի յերեսը, այլ յուրաքանչյուր արմատի տակ լցնում  
են 35—40 գրամ։ Տնկելու ժամանակ պարարտանյութը  
լավ խառնում են հողի հետ։ Ճակնդեղի սերմացուներն  
իրենց դարգացման համար կարիք ունեն մեծ խոնավու-  
թյան, դրա համար ել հարավի շորալին տեղիքում սրանք  
պետք է տնկել ցածրադիր կամ ջրովի հողամասերում։

Հյուսիսային շրջաններում և միջին գոտում, վորտեղ  
խոնավությունը մշտապես ըսվարար է, բայց ջերմություն-  
ը պակաս, ճակնդեղը պետք է տնկել բարձրադիր հողա-  
մասերում։

Մերմացուի համար ընտրված հողամասը պետք է վա-  
րել վարելաչեղրի խորությամբ (սորմալը 18—20 սանտ) և  
պարարտացնել աշնանից։ Հողի գարնան մշակումը կայանում  
է նրանում, վոր փխրեցնում են եքստիրպատարով կամ  
դսպանակավոր ցաքաններով։ Հետո ցարանում են յերկաթյա  
ցաքաններով, տափանում ու մարիլրովկա լին անում  
(գծում են) յերկու ուղղությամբ։ Մարկիրովկայի ժամանակ  
պետք է պահպանել դժերի ուղղությունը, վորը ինամքի  
ժամանակ շատ հեշտացնում է աշխատանքը։ Մերմացու  
ճակնդեղը պետք է տնկել վորքան հնարավոր է ԵՈՒՏ՝  
գաշտ գուրս գալու առաջին հնարավորության դեպքում,  
վորովհետև միայն վաղ տնկելն է ապահովում սերմերի լավ  
բերքը։ Սակայն, անպարման պետք է խուսափել տնկելուց՝  
հողը կպշուն, ցեխոտ լինելիս։ Ինչպես փորձը ցույց է տա-  
լիս, սերմացուն կպշուն հողի մեջ տնկելիս ավելի  
փշանում է։

Արժանները անկում են մարկիսի նշած յերկու հետ-  
քերի էրշտ խաշածեւոյ տեղերում: Այս կանոնը պետք է  
խառնութեամբ պահպանել, վարովեան խնամքի ժամանակ  
բոլոր այդ խաշածեւոյ տեղերից դուրս Մաքածնէն ան-  
խուսափել իրեն դուրս կհանվին և կհնչնանան:

Տնկելու ժամանակ արմատն ամբողջովին թաղել հողի  
մէջ և կողքերը հողով լավ ամրացնել այնպէս, վոր ասանց  
ուժ դորձ դնելու նա տեղից չշարժվի: Տնկողն արմատն  
ամրացնում և վոչ թե ձեռքով, այլ վտարով:

Արմատի գազախը պետք է լինի հողի մակերեսին  
համասար բարձրութեան: Արմատը հողի մակերեսովից  
բարձր թողնելն անթույլատրելի չէ: Այդպէս սաղը անկած  
արմատը հողը նստելուց հետո, իր մեծ մասով հողի մա-  
կերեսից բարձր կմնա ու իր տե՛՛մն սկզբում կշորանա,  
իսկ գարգացած սերվացուն քսմուց շուտ կգա ու կընկնի:

Զպետք է նաև շատ խորը անկեր Խոր անկելիս ար-  
մատները հողի տակ շնչանեղձ են լինում ու բոլորովին չեն  
աճում, կամ տնում են ուշ, բույսերի գարգացումը հետ և  
ընկնում: Գրտ հետաները լինում և սերմերի վոչ ցանկալի,  
աննափասար հասունացումը:

Արմացունները տնկելու ժամանակ շարքամիջերի տա-  
րածութեանը թողնվում և այն հաշվով, վոր խնամքի ժա-  
մանակ հնարավոր լի՛ի շարքամիջերի մերկնայացված մշա-  
կումը: Գործնականում բնգունված և անկել թե քառակու-  
սի և թե ուղղանկյուն ձևով: Քառակուսի անկելու ժամա-  
նակ տարածութեան թողնվում և 70×70 սանտիմետր,  
ուղղանկյուն անկելիս՝ 90×60 սանտիմետր: Առաջին գեղ-  
քում մի հեկտարի վրա տեղավորվում և 20100 արմատ,  
յերկրորդ գեղքում՝ 18500: Բիշ բերքի հողերում գերա-  
պատելի չէ քառակուսի անկելը, իսկ արգավանդ հողերում՝  
ուղղանկյուն:

Տնկելուց 10—15 օր անցնելուց հետո սերմացուններն

սկսում են անել, Հենց վոր շարքերն արդեն լերևում են, պետք է ստուգել՝ արդյոք բոլոր բույսերն ել բողբոջներ տվել են, թե՛ վոչ, և յեթե կան շրտղութեամբ արմատներ, անհրաժեշտ է այդպիսի հաս ու կենտ խոր անկած արմատները բաց անել, Դրանից հետո պետք է կատարել շարքամիջերի առաջին փխրեցումը: Այդ ժամանակ սերմացունները դեռ թույլ են դարգացած և բույսերի մի մասը փրբեցնող գործիքների աշխատանքի ժամանակ հողով կծածկվեն: Նրանք պետք է բաց անել, վորովհետև հսկով ձածկված բույսերի անեցողութունը հետ է բնկնում:

Ճակնդեղի սերմնադաշտի շարքամիջերը պետք է մշակել տասն ուրը մեկ անդամից վոչ ուշ: Մշակումը դադարեցնում են սերմացունների շարքերն իրար միանալուց առաջ: Միջշարքային տարածութիւնները ժամանակին մշակելու դեպքում ձեռքի քաղհանի կարիք կլինի միայն սերմացունների շուրջը յեղած մեծ մոլախոտերը վոչնչացնելու համար:

Հյուսիսային շրջաններում սերմացու ճակնդեղի մշակման ժամանակ գործադրվում է նրանց ցցերից կապելու ձևը: Ծցերը պետք է անկել և բույսերը նրանց կապել սերմացունները միմյանց միանալուց առաջ, այսինքն՝ այն ժամանակ, յերբ շարքամիջերի հետագա մշակումն աննարելի է դառնում:

Իրբև հասուկ ձև լերբեմն (սերմերը բով հասնելու համար) սերմացու բույսերը ձերատում և կողքերի ցողունները կտրատում են: Փորձը ցուլց է ավել, վոր բույսերը չպետք է ձերատել, իսկ կողքերի ցողունների կտրատումը պակասեցնում է սերմի բերքը: Սերմացունների հասունացումն աջնակ, վորտեղ նրանք կարող են հասունանալ, կատարվում է և ուսանց ձերատման և կողքերի ցողունները կտրատելու:

Սերմացուի անկելուց մինչև հասունացումը տևում է

3<sup>1</sup>/<sub>2</sub>—4 ամիս Հասունացման ժամանակ ցողունի ցածի տերևները շորանում են, սերմերը փոխում են իրենց կարմրահանաչ դուխր դեղնա-կանաչիս Վոսակերի վրա հայտարեր-վում են առանձին գորշ-կարմրավուն դուխ ստացած կծիկներ, Յեթև լեզանակը չոր և և տար, սերմերի գունավորումը գնում և շատ ներգաշնակ:

Պետք և բերքահավաքն շտապեցնել, շտապելով, վոր բոլոր սերմերը գորշանան, հակառակ դեպքում հասունացած ավելի արժեքավոր սերմերը կթափվեն:


Չսխալվելու և սերմացուները շատ կանաչ չքաղելու համար, հովաքը պետք և կատարել այն վայրկյանին, յերբ թփի վրա սերմերի մի քառորդը գորշ-կարմրավուն կդառնա: Այդ դրությամբ սերմը հավաքում են Վարձնեծի և Կուրակի մարզերում, Ուկրաինայում և Հյուսիսային Կովկասում: Ավելի հյուսիսային շրջաններում, սրինակ՝ Մոսկվայի մարզում, սերմացուները քաղում են, լերը թփի վրա սերմերի մի յերրորդը կամ մտասվորագին կեսը գորշ-կարմրավուն կլինի:

Հարավային շրջաններում, վորտեղ սերմերի հասունացումը համարաչա և բնթանում, ս՝ բացուներն ամբողջ հոգամասում հավաքում են միտժամանակի Հյուսիսային շրջաններում, վորտեղ հասունացումը լերկարում և, բերքահավաքը կատարվում և բնարությամբ:

Չոր, արևոտ լեզանակին կտրված սերմացուները չորացնելու համար դասավորում են դաշտում բուշերի մնացած արմատների վրա Չորացած սերմացուները պետք և անմիջապես կախել Յեթև կարումն ուշանում և, սերմացուները գիզում և պահում են ծածկի տակ: Յեթև վատ լեզանակի պատճառով հնարավոր չե սերմացուները դաշտում չորացնել, նրանցից պետք և ճ—ճ-ական բույսից խրձիկներ կաղել, տանել ծածկված ջնոք և կախել կախարաններին:

Մեծ քանակութեամբ սերմացուի կալուածը կատարվում է ձիու սովորական կամ բարդ կալիչով: Քիչ քանակութեամբ սերմացուն կալուած են շղթաներով:

Կալված սերմերն առաջին անգամ մաքրում են սովորական քամհարով: Մոկողից, ցողունների և փայտից մաքրելուց հետո սերմերն անց են կացնում տեսակավորող քամհար մեքենայով: Վերջնական մաքրումը կատարվում է ճակնդեղի շարժական հատակ ունեցող հատակ մեքենայով:



Նկ. 11. ճակնդեղի սերմ մաքրող մեքենա

ձևով պահում մինչև ցանքը:

Պարկեր չլինելու դեպքում սերմերը 50—60 սմ հաստութեան շերտով լցնում են պահեստի բաժանմունքները: Սերմերն իրար վրա լցրած պահելու ժամանակ չուրաքանչյուր 15—20 օրը մի անգամ պետք է թիով խառնել:

Ճակնդեղի սերմերի քանակը մի հեկտարից կարելի է հասցնել սինչև 10—12 ցննաների:

Կանոնավոր պահելու դեպքում ճակնդեղի լավ հասունացած սերմերը 6 տարի պահում են իրենց ծլունակութունը:

Սերմը պետք է պահել չոր, լավ ողափոխվող շենքերում:

Մարքված սերմը պետք է լավ շորացնել, հակառակ դեպքում պահելու ժամանակ նրանք կարող են տալանալ, վարից մեծ չափով կիջնի նրանց ծլունակութունը: Զորացնելուց հետո լցնում են պարկերի մեջ և այդ

## ՃԱԿՆԳԵՂԻ ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԸ

Ճակնդեղի (ճողայիմ) լվիկ.— Սև դուխի, բրոնզի փայլով կամ կանաչավուն փափուկ թուշոզ բզեզ և Շատ առաձայնած և ամբողջ Միուխյան մեջ, Վնասում և ճակնդեղի մատղաշ բույսերին, կրծելով և ծակեր առաջացնելով սերնետերի վրա

Պայմարի միջոցներ.— 1) Փոշոտում՝ մկնդեղաթթվային կայլիով (5—8 կիլոգրամ թուշն մի հեկտարին) կամ ծխախոտի փոշու և կրի խառնուրդով. 2) փոշոտում անարագուստով կամ նիկոտուստով: Անարագուստը պատրաստվում և 5 մաս անարագին սուլֆատից կամ նիկոտին սուլֆատից և 95 մաս հանգցրած կրափոշուց. խառնուրդը պետք է լավ խառնել. 3) մոխրով, ճանապարհի փոշով, կրով և ֆոսֆորիտային ալյուրով փոշեհարում և այլն

Ճակնդեղի մատղաշ բույսերին յերբևեմն վնասում են դիակեր բզեզի թրթուրները, Վորոնք լայնորեն տարածված են ամբողջ Միուխյան մեջ, բայց շատ վնասում են նաև հյուսիսային մասում: Բացի թրթուրներից, վնասում են նաև հատանացած մուգ դուխի, տափաղ բզեզները: Նրանց գեղ պայքարելու համար պետք է դործադրել փարիզյան կանաչով կամ կայծքարավորային նաարով փոշոտում:

Ճակնդեղի յերկարակնիք.— Գործանը վնասում են ճակնդեղի ծիլերին: Հողում ամած ձվերից դուրս յեկած թրթուրներն (սովորաբար հունիսին) ուտում են ճակնդեղի արմատները: Հողում նրանք վերափոխվում են հարսնյակի: Հարսնյակներից դուրս յեկած մատղաշ բզեզները մնում են հողում ձմեռելու մինչև հետևյալ դարուն:

Պայմարի միջոցներ.— Բզեզները բույսերի վրա յերևալիս՝ փշել փարիզյան կանաչ (25—50 գ, 10 լիտր շրում՝ կրկնակի քանակությամբ կիբ խառնելով), կայծքարավորային նաարով կամ 4—5% քլորիական բարիով



փոշոտել. 2) վազ գարնանն արդելակող առվակներ են շինուամ, վորոնք բաժանուամ են վարակված հողամասերը շվարակվածներից և առվակներուամ բղկներին վոշնչացնուամ են: Հանձնարարվուամ և ճակնդեղը շուտ ցանել:

Մարդագեղեկային քիթեռնիկ.— Վնասուամ և գլխավորապես Միուլթյան հարավային մասերուամ, բայց առանձին տարիները բազմանալով մեծ քանակությամբ՝ անցնուամ և ավելի հյուսիս:

Մարդագեղեկային թիթեռնիկը փոքր և, դեղնավուն գորշնագույն և, հալտնվուամ և (նայելով անդին շրջանին) մայիսին կամ հունիսին: Ձուռ դնուամ և զանազան մուլտտների և կուլտուրական բույսերի վրա (որինակ՝ ճակընգեղի), իսկ յերբնն ևլ բուսական մնացորդների վրա կամ ուղղակի հողում: Ձվերից դուրս յեկամ թրթուրներն սկզբբուամ մնուամ են նույն բույսերի վրա, վորտեղ ձու յեր դրված (գլխավորապես մուլտտների վրա), հետո մուլտտներից անցնուամ են կուլտուրական բույսերի վրա:

Թրթուրները կանաչավուն-մուրազույն են՝ մեջքին մուգ շերտով և դեղին շերտով կողքերին: Հարսնուակի վերափոխվուամ են հողում, նրա մակերեսի մտ՝ սարդասայնից հյուսված բոժոժուամ:

Մովորաբար հուլիսին թռչուամ են յերկրորդ սերնդի թիթեռները, վորոնք նույնպես վնաս են հասցնուամ: Հարավուամ մարդագեղեկային թիթեռնիկը տալիս և յերեք սերունդ:

Պայլառի միջցնկեր.— 1) Այն տարածութունները, վորոնց մարդագեղեկային թիթեռնիկը վնասել և, և նա հարսնուակի յե վերափոխվել, հերկուամ և շարքամիջերը փխրեցնուամ են: 2) մշտական պալքարել այն մուլտտների դեմ, վորոնց վրա մարդագեղեկային թիթեռնիկը ձու յե ածուամ: Ձու սծելու ժամանակ պետք և կատարել քաղհան, հնձել դաշաի յեղրերի խոտը, և ստացված մուլտտներով ու խասով կերակրել տնասուններին, սիլոսացնել կամ ծածկել:

հողով և թողնել քայքայվելու՝ կոմպոստի համար. 3) Թըրթուրների մի դաշտից մի այլ դաշտ սեղափոխու թլու ննքի ժամանակ նրանց աննապարհի լայնությամբ ակոսներ անցկացնել, վորտեղ դնել վարդիզլան կանաչով թունավորված ննձած խտոր. 4) Թրթուրների դեմ պայքարել՝ փչելով փարիզյան կանաչ (20—25 զր կանաչ և 50 զր շնանոցրած կիւ 10 լիտր ջրում), քլորիական բարի (400 զր 10 լիտր ջրում) կամ թե մկնդեղաթթվալին կայցիով կամ կայծքաբավատորալին նատրով փոշուակ. 5) Թիթեռների մասսայական թռիչքների ժամանակ կիրառվում և նրանց վորսը մատալի ցանցերով. 6) Թրթուրները ձեռքով հավաքել:

Առվկա-զամմա.— Այս թիթեռի թրթուրները հայտնի յնն նույնպես «հողաշափ ճիւղ» անունով, վնասում են ամեն տեսակ բանջարանոցային և այլ բույսերի: Միջին գոտում թիթեռը սովորաբար հայտնվում և հունիսին, ձույն ամում գլխավորապես մուլխոտերի, նույնպես և կուլտուրական բույսերի վրա:

Թրթուրներն սկզբում սնվում են մուլխոտերով, հետագայում անցնում են կուլտուրական բույսերի վրա: Հարսնայակի վերափոխվում են սարգաստայնաձև բոժոժի մեջ, վորը սովորաբար կղած և լինում բույսին:

10—15 սրից հետո հարսնայակից դուրս և դալիս-թիթեռի յերկրորդ սերունդը:

Պայլաբի միջոցները.— 1) Արդելակող առվակները, 2) թույներ փչելը և վաշտաումը (վարիզյան կանաչով, կայծքաբավատորային նատրով, քլորիական բարիով, մկնդեղաթթվալին կայցիով). 3) մուլխոտերի վաճառում:

Ճակնդեղի սերմագաշակելն վնասում են վերահիշյալ վնասատուների մեծ մասը (մարդագետնալին թիթեռը, սովկա-զամման և այլն):

Սերմագաշակելն խիտ վնասում են նույնպես և լիճները, վորանց դեմ կիրառում են անարադին-սուլֆատ

փշելը (10 լիտր ջրին 10—15 գր՝ ավելացնելով 50 գր սճառ) և անարագուստով փոշոտումը:

Ճակնդեղի առանձին ֆնասատուների և հիվանդութիւնների դեմ, բացի պայքարի հիշյալ միջոցներից, մեծ նշանակութիւն ունեն ընդհանուր՝ դիւրավորապէս ազդոտեինիկական միջոցառումները: Նրանք մի կողմից անմիջապէս ներգործում են ֆնասատուների վրա, մյուս կողմից՝ նպաստելով բույսերի լավ աճմանը, հնարավորութիւնն են տալիս նրանց լավ դիմանալ վնասվածքների:

Այդ միջոցառումների թվին են պատկանում.

1) լավորակ սերմեր ցանելը,

2) կանսնավոր ցանքայրջանառութիւն կիրառումը,

3) պայքարը մոլախոտերի դեմ, վորոնցից շատերը ֆնասատուներին կեր են ծառայում և միևնույն ժամանակ ֆնասատուների բուռն են,

4) բերքահավաքի մնացորդների հավաքումը դաշտից (տերևներն սդտագործելով սիլոսի համար և այլն),

5) խոր աշնանահերկ կատարելը:

Մ Ե Ա Ս Ր Ա Ր Յ Ա Ա Մ. — Վնասատուների դեմ ջրմիկան միջոցներով պայքարի ժամանակ պետք է հիշել, Վոր ֆնասատուների դեմ պարձադրվող միջոցներից շատերն ուժեղ թույներ են մարդկանց և կենդանիների համար: Գործադրելու ժամանակ պետք է ստացույց լինել՝ աշխատանքը կատարել արտհարուստ հագած, աշխատանքից հետո ձեռքերը լավ լվանալ: փոշեմե թույներ գործադրելու ժամանակ կիրառել բոսպիրատորներ (կամ մատուցով կապել բերանը և ջրիքը) և պաշտպանող ակնոցներ: Բանջարեղեններին դեղեր փշելը և փոշոտումը դադարեցնել բերքահավաքից 20 օր առաջ (նույնպէս և թարմ բանջարեղեն վերցնելու ժամանակ): Անարագին սուլֆատի և անաբազուստի համար այդ ժամկետը կարելի չէ կրճատել:

## ՎԵՐԿԵՂԻ ՎԻՎԷՆԳՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Տեւելմերի բծավորութիւնը. — Հիվանդութիւնը վրնասում է տերևները, տերևակոթերը և ցողունները (տեր-

մայրուհիներն)։ Հայտարարվում և բաղմամթիվ գորչ մանր կյոք կարմիր շրջագծով բծերի ձևով, վորոնք հետագայում ծածկվում են մուգ գույնի փառով։ Բժեր յերևալուց հետո տերևներն սկսում են շորանայ, և, իբր դրա հետևանք, հիվանդ բույսերն աչքի յեն ընկնում շաքարի քիչ պարունակությամբ։ Բժամվորութլունն առաջին անգամ հայտարարվում և հունիսի յերկրորդ կեսից վոչ շուտ, ալիլի ուժեղանում և սգոտասու-սեպտեմբերին և մնում և մինչև ճակնդեղ հասնելը։ Հիվանդությունը զարգանում և բարձր շիրմության և խոնավության դեպքում։

Պայլարի սիպոցնները.— Յանքաշրջանաւութլուն, դրա հետ միաժամանակ շ—Յ տարով ճակնդեղը հանելով ցանքաշրջանաւութլունից, բերքահավաքից հետո գաշալից բոլոր մնացորդները հավաքել և վոչնշաջնել ու խորը հերկ։

Արմատակեր.— Ճակնդեղի սերմնաբույսերի հիվանդութլուն և Հայտարարվում և նրանով, վոր արմատավզիկի մաս սկզբնական շրջանում գոյանում և բաց-գորշ-յերկարալուն բիծ, վոր աստիճանաբար մուգ գույն և ստանում, մեծանում ու բռնում ամբողջ արմատավզիկը։ Ուժեղ վնասվելու դեպքում բույսերը պատկում են և վոչնշանում, բայց յերբեմն նրանք ընդունակ են վերականգնվելու շնորհիվ նրա, վոր նրանցում հիվանդ անզից վերև գոյանում են նոր արմատիկներ։ Այնուամենայնիվ ավելի հիվանդութլունն ազդում և բերքի վրա, վորովհետև ալդալիսի բույսերի աճեցողութլունը յետ և ընկնում և արմատներն անկանոն և զարգանում։ Արմատակերը գլխավորապես նրկտավում և ցածրազիր հողամասերում և ծանր կալվալազային հողերում։

Հիվանդութլան պտտճատ են դառնում հողի անբարենպաստ պայմանները և զանազան սունկեր, վորոնք արագ և հեշտ զարգանում են ուժասպառ բույսերի վրա։

Արմատակերի գեմ պալքարի միջոցները կայանում են

Նրանում, վոր ազրոտելնիկական ձեռնարկումներով պետք է լայացնել հողի հատկությունները և ստեղծել բարենպաստ պայմաններ՝ բույսի արագ և համաչափ զարգացման համար:

**Յոճագ.**— Սունկը մնասում և բույսի զանազան մասերը: Տերևների վրա զտվանում են բաց-գորշագույն յերկարավուն կամ կլոր, շատ անգամ միաձուլվող բծեր, վորոնք ծածկված են շրջագծերով և մանր սև կետերով՝ սընկի պտղատվությամբ, վորոնց միջոցով հիվանդությունն աճման ընթացքում տարածվում և մի բույսից մյուսին: Հիվանդանում են գլխավորապես ցածի թուլացած տերևները, վորոնք հետագայում դարձանում և չորանում են: Յերբեմն հիվանդությունը տերևներից անցնում և տերեփակոթերին և մուտք է դործում արմատավզկը՝ մնասելով գլխավոր բողբոջը: Մսկի համար աննպաստ պայմանների հեռանալով հիվանդությունը հենց դրանով էլ վերջանում է, բայց մնասված արմատապտուղները լրիվ մեծության շին հասնում և նրանց շաքարի սուկոսը պակասում և: Սունկը կարող է մուտք դործել և արմատի մեջ՝ սկզբում գարգանալով նրա արտաքին մասերում, հետո անցնելով միջուկը՝ առջացնելով սև փտախաւ: Հետագայում, ձմեռը պահելու ընթացքում, հիվանդությունն ուժեղանում և և մնասված արմատապտուղների վրա նկատվում են քիչ փոքրնկած գորշ բծեր:

Մյու սունկը մնասում և և սերմացուներին՝ զարգանալով տերևների, ցողունների ու կծիկների վրա:

Վարակված սերմեր ցանելիս, նույնպես և հողից՝ սունկը մնասում և ճակնդեղի ծիլերին՝ հանդիսանալով արմատակերի առաջացման պատճառներից մեկը:

**Պայխարի սիզոցներ.**— Բերքահավաքից հետո մնացորդների վոչնչացում, ցանքաշրջանառություն, վորից հասնել ճակնդեղը 4 տարով, և հողի ժամանակին մշակում:

ձակնղեղի կեղծ պրացոյ.— Վնասված բույսերի վրա նկատուում են հաստացած, կնճռատված, ծալված լեղքերով, շուտ ջարդվող տերեւներ, վորոնց տակի լերկուր ծածկված և գորշ-մանուշակագույն ավրանման փոռով Փառլ կազմված և սնկի պաղակիրների կուտակումներից, վորոնք և տարածոււմ են ավայլ հիվանդութիւնը։ Հիվանդ ճակնղեղների վրա գարգանոււմ են ավելի շատ տերեւներ, քան առողջների։ Այդ նշանով հեշտ և զաշատու հայտարբերել հիվանդ բույսերը։ Ավելի ուշ՝ հիվանդութիւնն անցնում և արմատին և կարող և այդպիսով մուտք դորձել և պահեստները։

Պայտաբի միջոցները.— Հիվանդ բույսերի վորջնչացում, ցանքաշրջանառութիւն՝ նրանից հանելով ճակնղեղը 3—4 սարով և բույսերին բորդոյան հեղուկ փչելը։

Մոխրագույն փախտ.— Հիվանդութիւնը ճակնղեղի վրա գարգանոււմ և ձմեռը պահելու ընթացքում և կոշկում և սրբգային փախտաւ։ Վնասված մասերում սկզբում յերեւում են գորշ՝ տախճանարար մեծացող խաւեր։ Վնասված հյուսվածքները կծկվում են, նեխում և ծածկվում մախրագույն բորբոսաձև փոռով։ Վորտշ ժամանակ անց այդ տեղերում գոյանում են մանր պինդ սև խուլեր, վորոնք դիմանում են ձմեռվա անբարենպաստ պայմաններին։ Այդ խուլերից հետեյալ տարին հիվանդութիւնը նորից տարածվում և։

Մոխրագույն փախտը գարգանոււմ և բերքահավաքի և արմատները բուրգերում պահելու սրենքները խախտելու հետեանքով։

ձակնղեղի բակսերիսզ.— Բակտերիոզով բռնված բույտի տերեւները ժամանակից առաջ դեղնում են և թաւստում։ Արմատների վրա հայտնվում են մախրա-կապտա-փուն բծեր, արմատի ծայրը կնճռոտվում և սեանում և։ Ատախճանարար արմատի ամբողջ հյուսվածքը նեխում և գանոււմ և շփոթանման, մածուցիկ մասսաւ։

Բակտերիոզը թեպէտև վնասում է յերբէնն և արմատներին՝ նրանց զարգացման առաջին տարին՝ վերքերի և շանգոփածքների միջոցով հողից անցնելով արմատին, բայց ամենից հաճախ նա հայտարարվում է նակնդեղը բուրդերում ձմեռը պահելու ժամանակ, և այսպիսով այլ միկրոօրգանիզմների հետ միասին դառնում է ախտեւ կոշված՝ բրդային փտախտի պատճառ:

Պայխարի միջոցները.— Ուժեղ ֆուֆոքային պարարտացում, կատարել արմատների խիստ լնտրություն և վատորակների խոտանում՝ ինչպէս պահեստ դնելուց առաջ, այնպէս ել տնկելուց առաջ, հիվանդ և խոտանված արմատների վոշնչացում և ձմեռվա պահպանության համապատասխան կանոնների կատարում:

Ճակնդեղի խայսարդեսություն.— Հիվանդությունն արտահայտվում է նրանով, վոր վնասված բույսերի տերևները ծածկվում են մարմարանման նկարով, այսինքն՝ տերևի բնդհառաւ ավելի գունավորված ֆոնի վրա հալտարելով են զանազան մեծության և ձևի բաց դուրսի տարածություններ Բացի դրանից, հիվանդ տերևները զանգրանում են, կամ նրանց յեզրերը ծալվում-վոլորվում են:

Հիվանդանում են գլխավորապէս մատղաշ, աճող տերևները: Հին տերևների վրա ժամանակի ընթացքում խայտարակտությունն ավելի աննկատելի յե դառնում և իվերջո կարող է բոլորովին անհայտանալ Բայց հիվանդության ուժեղ զարգացման ժամանակ խայտարակտությունը մնում է նաև հին տերևների վրա:

Խայտարակտությունը քայքայիչ ազդեցութուն է ունենում հիվանդ բույսերի վրա, նրանց աճեցողությունը կանգ է առնում, թե արմատների, թե սերմերի բիչ բերք և առացվում Բացի դրանից, հիվանդ բույսերի շաքարի ապուսն ընկնում է:

Մայաարդեատութիւնը պատահում է ճակնդեղի բոլոր  
 ցանքերում, խոհ առանձնապէս սերմնադաշտերում, վոր-  
 տեղից նա շատ դեպքերում անցնում է ճակնդեղի առա-  
 ջին տարվա ցանքերը:

Մայաարդեատութիւնը վարակվելը հասնում է 30—  
 70<sup>0</sup>/<sub>0</sub>-ի:

Հիվանդութիւնն աւրածողներն են ծծող միջատները,  
 որինսկ' լլկնները:

Պայտուրի միջոցները.— Առանձին հիվանդ բույսերի  
 վաշնչացումն Մալուսիան ցանցադաշտերը, վորոնցում հի-  
 վանդութիւնը հասնում է 30—40<sup>0</sup>/<sub>0</sub>-ի, պէտք է խոտա-  
 նել, վաշնչացնել վարակը վախադրող միջատներին և ճա-  
 կընդեղի առաջին տարվա ցանքերը հնարավորութիւն շափ  
 սերմնադաշտերից հեռու կտաւել (200 մետրից վաշ պա-  
 կաւ):



## ԲՈՎԱՆԳԱԳՈՒԹՅՈՒՆ

Մեղանի ճակնդեղն սմինատառածված արմատապտուղներին մեկն և . . . . .	5
Խնչ պետք և իմանալ ճակնդեղի մասին . . . . .	6
Խնչպիսի կլիմայում լավ և աճում սեղանի ճակնդեղը և նրա համար ինչպիսի հողեր են պետք . . . . .	10
Ճակնդեղի տեղը ցանքաշրջանառության մեջ և նրա լավ նախարգները . . . . .	11
Խնչպես պարարտացնել հողամասը ճակնդեղի համար . . . . .	12
Խնչպես մշակել հողը ճակնդեղի համար . . . . .	13
Խնչպես և կատարվում ճակնդեղի ցանքը . . . . .	16
Ցանքի ձևերը . . . . .	17
Խնչպես խնամել ցանքը . . . . .	20
Խնչպես և կատարվում բերքահավաքը . . . . .	29
Վերտիկ և ինչպես պահել ճակնդեղը՝ ձմեռը . . . . .	32
Մեղանի ճակնդեղի սարածված ստրաները . . . . .	40
Խնչպես աճեցնել ճակնդեղը սերմի համար . . . . .	45
Ճակնդեղի ֆուսատուները . . . . .	55
Ճակնդեղի հիվանդությունները . . . . .	58



Գրու. Խճրագիր՝ Լ. Մարտիչյան  
Տեխ. Խճրագիր՝ Լ. Մարտիչյան  
Լեզվ. Խճրագիր՝ Սրբ. Չրիզորյան  
Բազմամեկն և սրբագրեց՝ Խ. Ալվադյան

Չլուսվիտի լիտգոր Ս—423, հրատ. № 379, պատվեր № 646, տիրում 2009  
հանձնված և արտագրության 1935 թվի նոյեմբերի 1-ին  
Մատրագրված և տպագրելու 1935 թվի դեկտեմբերի 25-ին

Չրեզհրատի տպարան, Յերևան, Նալբանդյան № 11

ՀԱՅ ՀԻՍՏՈՐԻԱԿԱՆ ՊԻՆ. ՊՐԱՊ.



FL0001293

4122 60 409.

104.

A  $\frac{11}{24931}$



БИБЛИОТЕКА ПОДХОЗНИКА

С. В. АГАПОВ, Б. А. ГЕРАСИМОВ, И. И. ТАРБЕЕВА

СТОЛОВАЯ СВЕКЛА

СЕЛЬХОЗГИЗ — ЗРИВАНЬ 1935